ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 92-Լ

«28» 11 2024 թ. ք. Երևան

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԻՍԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ԿԽ-010/24 որոշմամբ հաստատված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված առարկայական կուրսերի արդյունքները գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար, գնահատման և բողոքարկման հանձնաժողովներում դատախազ անդամներ նշանակելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց երկրորդ խմբի քննաշրջանի ընթացքում ստուգման ենթակա առարկայական կուրսերի արդյունքները գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ

Սիրո Ամիրխանյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետ,

Լուիզա Մանուկյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետ,

Տաթևիկ Սարուխանյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ,

Գևորգ Քոչարյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության ավագ դատախազ,

Համլետ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց երկրորդ խմբի քննաշրջանի ընթացքում ստուգման ենթակա առարկայական կուրսերի արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Եղիազար Ավագյան - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Տիգրան Ենոքյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ